

Վասպուրականի Արտամէտը հասկնալու է, ինչպէս որ արդէն ըստ Հ. Աւգերեանի¹⁰⁷ Յայտմաւորքները կը յիշեն: Ասիկա գէթ այնչափ կը ցուցնէ որ Յակոբ Մծբնացին մինչև Մասիս լեռը չհասաւ եւ վերոյիշեալ տեղիքին մէջ Վանայ լճին եզերքը հասկնալու է: — Յետագայ շրջանին նաեւ եւրոպացի գիտնական ճանապարհորդներ կը յիշեն Մասիսի աւանդութիւնն¹⁰⁸, որ սակայն մեր խնդրոյն համար ո եւ է նշանակութիւն չունի, այնու որ իրենց ժամանակի աւանդութիւնն է որ կը հաղորդեն:

Եթէ ժԱ. մինչև ժ.Բ. դարէն յառաջ ընդհանրապէս Մասիսի աւանդութիւնը գոյութիւն ունեցած ըլլար, այն ժամանակ ապահովապէս այսչափ երկար ժամանակամիջոցէն վկայութիւն մը մեզի հասած պիտի ըլլար: Որովհետեւ այս ժամանակաշրջանի շատ մը մատենագիրներ¹⁰⁹ եւ ոմանք կրկին ու կրկին անգամ Նոյի, ջրհեղեղի եւ տապանի մասին կը խօսին, եւ սակայն ամենազոյգն կերպով իսկ չեն ակնարկեր թէ որ լեռան վրայ տապանն իջած է: Այս պարագան անկարելի է ըմբռնել երբ նկատենք վեհափառ Մասիսն, որ հին դարերուն արդէն դանազան առասպելներու որբանն ու միջնակէտն եղած է եւ իւր ներկայութեամբն յանգէտս ամենուն Մասիսի աւանդութիւնը պիտի յիշեցնէր, եթէ նման աւանդութիւն մը գոյութիւն ունեցած ըլլար:

Նոյն իսկ Մն. Ը. 4 տեղիքին հայերէն

¹⁰⁷ Լիակատար վարք եւ վկայարանութիւն սրբոց, հատ. Ժ., էջ 17:
¹⁰⁸ *Ինչպէս* Guillaume de Ruysbroeck եւ Vincent de Beauvais, որոնց մասին տե՛ս P. Peeters, La légende de S. Jacques de Nisibe, Analecta Bollandiana, 1920, p. 329. Նաեւ Adam Olearius, Vermehrte neue Beschreibung der Moscovitischen und Persischen Reyse (Schleswig 1656), էջ 399 կը պատմէ թէ Շամախի եկեղեցւոյ մէջ կէս կանգուն մեծութեամբ խաչ մը կայ՝ մետաքէ նիւթերով փաթթուած, որ իրր թէ տապանի փայտերու մնացորդներէն շինուած է:
¹⁰⁹ *Ինչպէս* Ազգաթանգեղոս, զլ. Ժ.Ե = § 169, Ժ.Զ. = § 172, Ի.Ե. = § 296, Եզնիկ, Ընդգէմ պղանգոց, էջ 153, 164: Ղազար Փարպեցի (իւր «Թղթոյն» մէջ), 1904, էջ 190: — Յովհ. Մանգակունցի, Ճառք (Վենետիկ 1860), էջ 33, 145, 157 յջ., 204: — Եղիշէ (Վենետիկ 1859), էջ 82: — Մ. Խորենացի, Պատմութիւն, Ա., 4, 5, 6: — Յովհ. Կաթողիկոս, Պատմութիւն Հայոց (Թիֆլիզ 1912), էջ 11: — Գրիգոր Նարեկացի, Ճառք (Վենետիկ 1827), էջ 196, 197 յջ., համար. նաեւ էջ 231, 239, 248: — Ուխտանէս, Պատմութիւն Հայոց (Վաղարշապատ 1871), էջ 17: — Գրիգոր Մազեպետոս, Տղայասցութիւնք (Վենետիկ 1868), էջ 9, 80: — Ներսէս Ենքոզայի, Տաղաչափութիւն (Վենետիկ 1830), էջ 16 յջ., 318, 413, 475, 489, 501, 548, 579: — Մամուէլ Սկեւրացի առ Ալիշան, Տեղադիր Հայոց Մեծաց (Վենետիկ 1853), էջ 6: — Վարդան վարդապետ, Պատմութիւն (Վենետիկ 1862), Գ.—Ե. = էջ 7—9:

Թարգմանութիւնն այսպիսի աւանդութեան մը հակառակ կ'ելլէ: Եթէ Ս. Գրքի հայ թարգմանիչները Մասիսի աւանդութեան մասին գէթ աղօտ դադարիար մը ունեցած ըլլային, այն ժամանակ տ՛ս ձրարատ Այրարատ նահանգին հետ յարաբերութեան մէջ ղնելով ոչ թէ միայն «Այրարատ»ով թարգմանած պիտի ըլլային¹¹⁰, այլ հակիրճ կերպով «ի լեռինս Մասեաց», ասիկա ընթերցողներուն համար շատ աւելի պարզ եւ հասկանալի պիտի ըլլար եւ միաժամանակ հանուած իմաստին հաւատարիմ արտայայտութիւնը: Թէ ընակաւ նարար Ս. Գրքի հայ թարգմանիչները ո՛րչափ ժողովրդեան հասկացողութեան յարմարելու միտ դրած են, կը ցուցնէ ի մէջ այլոց Ձրօնն (Ես. ԾԲ., 10 եւ Յովք ԺԸ., 31), որ Հայկով թարգմանած են:

Ըստ այսմ այսօրուան մեր ձեռքը հասած հայ մատենագրութիւնը հիմ առնելով ժԱ. դարէն յառաջ Մասիսի աւանդութեան մը գոյութեան մասին կարելի չէ այլ եւս խօսք ընել: Մակայն եւ այնպէս Մուրատ (անգ., էջ 42 յջ.) կ'ուզէ առ այս վկայութիւն մը, թէ եւ «միակը», Մովսէս Խորենացւոյ քով գտնել, որ «սոցոտ կերպով հին, բերանացի աւանդութիւններէն քաղուած պատմութեանքներու բովանդակութիւնը կու տայ»: Պատմահայրս¹¹¹ Գորգի, Բանան եւ Դաւիթ աղբիւրներու հետեւողութեամբ կ'աւանդէ աղբերու բաժանման մասին յոյն փիլիսոփաներու մէջ տեղի ունեցած խօսակցութիւն մը, երբ ասոնց մէջէն ամէնէն յաջողակը՝ Ոլոմպիոզորոս այսպէս կ'ըսէ. «Պատմեցից ձեզ», կ'ըսէ, «զրոյցս անգիրս յաւանդութեան է ի մեզ հասեալ, զոր եւ բազումք ի գեղջկաց զրուցեն մինչև ցայժմ: Մատեան լեալ դ՛Բսիսութեայ եւ զորդուց նորա, որ այժմ ոչ ուրեք երեւի. յորում, ասեն, կարգ լեալ բանից այսպիսի:

Յետ նաւելոյ Բսիսութեայ ի Հայս եւ գիպելոյ ցամաքի, գնայ, ասէ, մի յորդուց նորա կոչեցեալն Սիմ ընդ արեւմուտս հիւսիսոյ գիտել գերկիրն, եւ գիպեալ դաշտի միում փոքու առ երկայնանստիւ միով լեռամբ, գետոց ընդ մէջ նորա անցանելով, ի կողմանս Ասորեստանի, դադարէ առ գետովն երկուսնեայ աւուրս, եւ անուանէ յանուն իւր գլեառն Սիմ.¹¹² Եւ դառնայ անդրէն յա-

¹¹⁰ Տե՛ս վերը ծնթ. 2:
¹¹¹ Պատմութիւն, Ա., գ.:
¹¹² Մանոյ գաւառին մէջ (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 70): Խորենացին կ'ընտրէ այս անունն, որովհետեւ Սէմ անունն շատ նման է, զոր հոս Սիմի կը փոխէ:

րեւելս հարաւոյ, ուստի եկն: Իսկ ի կրտսերագունից որդուցն նորա Տարբան անուն, երեսուն ուստերօք եւ հնգետասան դստերօք եւ նոցին արամբք մեկնեալ ի հօրէն, բնակէ անդրէն ի նոյն գետեղեր, յորոյ անուն եւ գլաւուն անուանէ Տարօն, եւ զանուն տեղոյն ուր բնակեցան՝ կոչէ Յրօնս. զի անդ գառաջինն սկիզբն եղեւ բաժանելոյ որդուց նորա ի նմանէ: Նորին դարձեալ եւ առ եզերք սահմանացն Բակարիացոց ասէին ընակել սակաւ աւուրս. մնացեալ եւ մի ոմն անդ յորդուցն նորա: Քանզի կողմանք արեւելից Ջրուան զՍիմ կոչեն, եւ Ջարուանդ¹¹³ զգաւուն անուանեալ ասեն մինչև ցայժմ: Բայց առաւել յաճախազոյն հինքն Արամագնեաց ի նուազս բամբուն եւ յերգս ցցոց եւ պարուց զայսոսիկ ասեն յիշատակօք»:

Այս երկար տեղիքը դիտմամբ յառաջ բերինք, որպէս զի ցուցնենք թէ որչափ խախուտ է Մուրատի գլխաւոր նեցուկը: Տեղիքիս մէջ յիշուող անունները՝ Բսիսութեայ, Սիմ — Սէմ, Սէմը Ջրուանի հետ նոյնացնելը, Տարօնը Տարբանէն, Ջարուանդը Ջրուանէն յառաջ բերին եւ ընդհանրապէս ամբողջ ոճն հայ ժողովրդական աւանդութիւն մը չի ներկայացներ, այլ Խորենացւոյ գիտական յեւրիւարները կը մատնէ: Նաեւ այն կարծիքը թէ Արամի յաջորդները «զայսոսիկ ասեն յիշատակօք» այնչափ անորոշ է, որ անկէ ոչինչ կարելի է եզրակացնել: Եւ նոյն իսկ եթէ տեղիքս ժողովրդական կորիզ մ'ունենայ, որ անկարելի չէ, այն ժամանակ նաեւ այս պատմութեան կողմը փնտռելու է, եւ Բսիսութեայի վերջին կայսնն ալ՝ հիմ առնելով Սիմ լեռան գիրքն¹¹⁴, որ հայկական Տաւրոսի հետ նոյն ըլլալ կը թուի¹¹⁵, եւ վերն ըսուածները, այլ հայկական Տաւրոսի քով գտնուող երկիրը կամ ընդարձակ իմաստով Կորդուաց աշխարհն¹¹⁶, որուն մասին պիտի խօսինք յաջորդ հատուածին մէջ:

¹¹³ Ջրուան եւ Ջարուան անուններու մասին տե՛ս Marquart, Südarmanien und die Tigrisquellen, ՀԱ. 1914, էջ 115, ծնթ. 1 եւ 2 = Արտասոյ, էջ 204, ծնթ. 2 եւ էջ 205, ծնթ. 1:
¹¹⁴ Խորենացի, Պատմութիւն, Ա. ԻԳ., Բ. Ը., Արիտասկէս Լատոս, զլ. ԻԱ., էջ 94:
¹¹⁵ Տե՛ս Marquart, Südarmanien, ՀԱ., 1914, էջ 113 = Արտասոյ, էջ 202:
¹¹⁶ Հմմտ. նաեւ Hübschmann, անդ, էջ 75:

(Շարունակելի:) Է. Վ. Ինճիճեան

ՎՐԱՅԵՐԷՆ ԳԻՐԸ ՀՍԵՐԷՆԻ ՀԵՏ ՀԵՄԵՄԱՏՈՒԹԵԱՐ

Վրացերէն լեզուն երկու տեսակ այբուբէն ունի. մէկը, հին, որ կոչուած է Խուցուրի, այսինքն եկեղեցական, միւսը նոր կամ այժմեան գործածականը, որ կոչուած է մխեդրուլի, այսինքն գիտութեան կամ քաղաքական: Հին այբուբէնը, որ գործածուել է բոլոր վրացերէն եկեղեցական կամ կրօնական ձեռագիրներում եւ արձանագրութիւններում եւ առհասարակ մինչև ժ. դար, մեր պատմիչների համաձայն յորինուել է Մաշթոցի (Ս. Մեսրոպ) շնորհիւ, Ե. դարում, հայերէն այբուբէնից անմիջապէս վերջը: Իսկ այժմեանը՝ մխեդրուլի կոչուածը գործածութեան մէջ է մտել ժԱ. դարից սկսած, եւ այնուհետեւ առաջինի կիրառութիւնը դադարել է: Այս տեսակէտը ընդունուած է բազմաթիւ եւրոպացի բանասէրների կողմից եւս:

Վրացի պատմաբաններն ու գիտնականները չեն ընդունում թէ վրացերէն գիրը Մեսրոպի ձեռքով կամ նրա նախաձեռնութեան շնորհիւ է ստեղծուած: Նրանց այս տեսակէտին յարող օտար բանասէրներ եւս կան: Դեռ եւս շարունակուած է այն մասին լուրջ գիտական վէճ երկու կողմերի մէջ: Նախ քան խնդրի մանրամասնութեան մէջ մտնելը, հարկ ենք համարում ընթերցողներին ներկայացնել վրացերէն հին եւ նոր գրի համադրական ցուցակը հայերէն այբուբէնի հետ: Անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ այս ցուցակի մէջ հայերէն գրերն այն դիրքն ու հիշումն ունին, որ ունեցել են Ե. դարում, թարգմանիչների ժամանակ, եւ ունին այժմ չայտատանում, կամ ընդհանրապէս Ռուսահայոց եւ պարսկահայոց քով, այսինքն p = b, d = g, k = k եւ այլն: Այս հիման վրայ հայկական եւ վրացական տառերի դիմաց դրուած են նրանց համապատասխան լատինական գրերը, գաղղիական արտասանութեամբ, ըստ կարելոյն: Այսպէս է վարուել ակադեմիկոս Ն. Մառ իր ուսերէն լեզուով գրած վրացերէնի քերականութեան մէջ¹, որից եւ արտասպել ենք: Նոյնպէս է վարուել նա իր գաղղ. լեզուով քերականութեանը մէջ: Նոյնը գտնում ենք նաեւ Փրանց Յորելի նորագոյն

¹ Н. Марр, Грамматика древнелитературного грузинского языка. Ленинград 1925.

Տ ւ ճ Ա ա
 Վ ց ծ Բ Բ
 Չ ջ ծ Գ Գ
 Ծ Ծ ը Դ Դ
 Պ ր յ Ե Ե
 Դ ր յ Վ Վ
 Ն ն Պ Ջ Չ
 Բ Բ Յ Լ Է

Բ ւ օ Թ Թ
 Կ ր օ Ի Ի
 Կ Կ յ Կ Կ
 Բ ւ օ Լ Լ
 Կ Կ յ Մ Դ
 Բ Բ Ե Ն ն
 Ծ օ լ Յ Ե
 Օ ւ օ Ո Ը

քերականութեանը² մէջ: Ուրիշ կերպ կարելի չէր արդէն: Հայերէնի հետ համեմատութիւնը մեծապէս զիւրութիւնն է ընծայում վրացերէնի ճիշդ արտասանութեան համար, քան որ եւ իցէ, ուրիշ այբուբանի հետ: Վրացերէնն եւս հայերէն այբուբանի նման լեզուի բոլոր հնչումները մի տառով է արտայայտում:

Այս համադրական ցուցակի մէջ պահանջուած է վրացերէն այբուբանի կարգը:

1. սիւնակը՝ եկեղեցական (խուցուրի) գլխագիրն է:
2. սիւնակը՝ նոյնի մանրագիրը:
3. սիւնակը՝ այժմեան (միսնոսութի) գրի միակ

² Grammatik zur altgeorgischen Bibelübersetzung von Franz Zorell S. J. Roma 1930.

ձևը, տպագիր, որովհետեւ գլխագիր չունի:

4. սիւնակը՝ հայերէն երկաթագիրը՝ գլխագիր:

5. սիւնակը՝ նոյնին բոլորգիրը:

Այս համեմատութիւնից բացորոշ կերպով երևում է, որ վրացական եկեղեցական գիրը (հինը) հայերէն այբուբանի հետ մեծ նմանութիւն ունի եւ այս վերջինից է ներշնչուած: Բայց ինչպէս որ հայերէն այբուբանի մեծ մասը յունականի վրայ ձևուած է եւ ոչ թէ օրինակուած, նոյնպէս է եւ վրացականը հայերէնի նկատմամբ, ինչպէս պիտի բացատրենք:

Վրացական այբուբանը (յատկապէս եկեղեցականը) հետեւեալ կարգն ունի.

Ս ւ Յ Պ ւ
 Վ ր ջ Ժ Ժ
 Ժ ւ օ Թ Ը
 Ե Ե Ե Մ ւ
 Բ Բ օ Տ ւ
 Վ ւ յ Ի Լ
 Օ ւ ւ յ Ո Լ Ը
 Փ ր յ Փ Ժ

Փ ր յ Փ Ժ
 Ո ր օ Ղ Ղ
 Վ ր յ Կ Ղ Կ Ղ
 Կ ր յ Ը շ
 Ի Ի Ե Չ շ
 Ե ր օ Տ Կ
 Ժ Ժ Ժ Չ ձ
 Բ ր օ Փ Ժ

ա. բ. գ. դ. ե. վ. զ. է. թ. ի. կ. լ. մ. ն. յ. ո. պ. ժ. ու. ս. տ. լ. ու. փ. ք. զ. զ (կամ կզ). շ. չ. ց. ձ. ծ. ծ. խ. խ. ջ. հ. հ. ընդամենը 38 տառ:

Ռուսերէնի ազդեցութեամբ սրանց վրայ վերջին դարում աւելցուած է 39րդ մի գիր Փ: Մինչեւ այդ՝ հին հայերէնի նման վրացերէնն եւս փ էր գործածուած, դրա տեղ:

Այս 38 տառերից 27րդ հայերէնում գոյութիւն չէ ունեցած. օտար լեզուներում եւս չկայ. նա հնչում է կղի նման. մօտաւորապէս արաբականի հնչումն ունի: Դիւրութեան համար եւրոպացիք եւ ուսանողները գրում են նաեւ զ = ք³: Չունինք հայերէնում

³ Թէեւ, գրում է էջմիածնի «Արարատը», այս

րէնում նմանապէս վրացերէն այբուբանի 35րդ տառը:

Համեմատելով խուցուրի գլխագիրները մեր երկաթագիր գլխագիրների հետ, պիտի տեսնենք, որ շատերը միեւնոյն ձևն ունին, բայց ոչ նոյն հնչումը: Անշուշտ այն նպատակով է եղած այս տարբերութիւնն, որպէս զի երկու այբուբաններն իրար հետ չզիտթուին: Այսպէս՝ հայերէն Դ վրացերէնի մէջ Վ է հնչում. հայերէն Ն վրացերէնի մէջ Պ է: Հայերէն Ը հնչումը չկայ վրացերէնում, բայց տառը պահպանուած է եւ հնչում է Խ եւ այլն:

Վրացերէն գրի փոխարէնը հայերէնում չունինք, բայց նրա հնչիւնը «բառական տարածուած է մեր գանազան բարբառներում»: Արարատ, 1912, էջ 560:

Տ ց Շ
 Է Է Ե
 Կ Կ Կ
 Ք Ք Ք
 Ն Կ Կ
 Թ Զ Զ

Ռ Ճ
 Խ Խ
 Ղ Խ Ղ Խ
 Ջ Ջ
 Հ Հ
 ՈՎ ոՎ

Այս վերջինը հին ժամանակ վրացերէն ձևադիրներում գործածուել է հայկական Ը գիրը փոխարինելու համար:

Միայն երկու գիր պահպանուել են թէ՛ ձևով և թէ՛ հնչումով՝ Կ և Ղ:

Համեմատելով խոցուրին՝ միեզրուլիի հետ, պիտի տեսնենք, որ առաջինի 8դ, 15դ, 22դ, 35դ և 38դ տառերը չեն մտել երկրորդում, այժմեան գործածական այբուբենում, իրրեւ աւելորդ:

«Համեմատելով սեմական և յունական այբուբենական շարքին հետ, գրում է մասնագէտ Պրոֆ. Հ. Աճառեան, կը տեսնենք, որ վրացի տառերն ալ մերիններուն նման կը հետեւին յունական այբուբենի շարքին: Վրացերէնն ունի 16 գիր, որ կը պակսին յունական այբուբենին մէջ. հայերէն այբուբենի ոճին հակառակ՝ յաւելուածական գրերէն 13ը գետեզուած են այբուբենին վերջը. միայն 3 գիր (վ, յ, ժ) հայերէն այբուբենի ոճով ներմուծուած են նախորդ գրերուն շարքը: Այս ներմուծումը սակայն անխորհուրդ և

պատահական բան մը չէ: Այս ներմուծումը թրեւս անոր համար ըլլայ, որ վրացի գրերուն թուական արժէքը յունականին հետ նոյն ըլլայ, ինչպէս կը նկատէ Գարգհաուդէն, մինչդեռ հայերէնին մէջ տարբեր է: Միւս յաւելուածական տառերուն շարքին մէջ, ուր չկայ հայերէնի հետ համապատասխանութիւն, կ'երեւայ թէ ի նկատի առնուած է ձայնախօսական շարքը, որով իրարու քով գրուած են զ, զ — ց, ձ, ծ — խ, խ — հ, հ:

Վրացերէն գրերը կը բաժնուին 7 խմբի.

1. հէ, բէ, էէ:
2. ան, բան, գան, թան, կան, ման, ժան, սան, քան, դան, ցան, խան, ջան:
3. են, ղեն:
4. վին, ին, շին, չին:
5. զոն, ոն:
6. նար, պար, տար, փար, դար, ճար, խար:
7. ձիւն, ծիլ:

Առանձին կը մնան՝ լաւ, հաւ, հիւ, հոն: Կատարեալ նոյնութիւն մը հայ և օտարագրի անուանակոչութեան մէջ գրեթէ չկայ: Ընդհակառակն հայերէն անուններու հետ կայ բաւական մեծ նմանութիւն:

Վրացերէն.	Հայերէն.
բան	բեն
գան	գիմ
ին	ին, ինի
կան	կեն
ման	մեն
ոն	ոա, րէ
ուն	հիւն
փար	փիւր
հոն	հո
հիւ	իւ

Ի նկատի ունենալով այս բոլորը, կը տեսնենք, որ գրերու անուանակոչութեան մէջ գեր խաղացած են թէ՛ սեմական և թէ՛ յունական անունները: Ս. Մեսրոբ օգտուելով թէ՛ մէկէն և թէ՛ միւսէն, բնորոշում առնոց մէջէն իրեն աւելի յարմար երեւցածներն, փոքրիկ փոփոխութիւն մը մտցնելով անոնց մէջ կազմած է իր յօրինած (հայերէն և վրացերէն) գրերուն անունները»⁴:

Այս ճիշդ գիտողութիւնները վրաց աւելացնենք հետեւեալը. վրացերէն լեզուի յատուկ է անունները ի վերջաւորութիւնն, որ ուղական հոլով է ցոյց տալիս: Ուստի վրացական այբուբենի այդ կոչումները սովորաբար արտասանուած են ի վերջաւորութեամբ, այսպէս՝ աւն-ի, բաւն-ի և այլն: Հետագրաբան է, որ մեր այբուբենի մէջ էլ կայ մի տառ, որ հետեւում է վրացերէնի օրինակին և արտասանում է ի վերջաւորութեամբ, այն է իւն-ի:

Վրացերէն-եկեղեցական և հայկական այբուբենները այս մեծ նմանութիւնը ինքնրտ ինքեան հզօր փաստ է նրանց միաժամանակ և միեւնոյն նախաձեռնողի միջոցով յօրինուելուն, որ մեր պատմիչների համաձայն Մաշքոց (Ս. Մեսրոպ) է եղած: Սակայն վրացի հեղինակներ գրեթէ միաձայն և նրանց հետ նաեւ եւրոպացի բանասէրներից ոմանք տարբեր կարծիք ունին այս մասին, ուստի կարծիք ունին այս մասին, ուստի տարբեր կարծիք ունին այս մասին, ուստի տարբեր կարծիք ունին այս մասին: Սակայն ինչպիսիք անկողմնակալ լուսարարութեան համար անհրաժեշտ ենք համարում անթերի յառաջ բերել հակառակ կողմի պատճառարանութիւնն ևս:

⁴ Հանդէս Ամսօրեայ, 1921, էջ 309—314:

Լսենք նախ մեր պատմիչների աւանդածը: Առաջին կամ ամենահին աղբիւրն, ինչպէս յայտնի է, կորիւն է, որ գրում է. «Իարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ, հոգի միտ արկանէր սիրելին Գրիստոսի (Մաշքոց) և վասն բարբարոսական կողմանն⁵ և անոյր կարգել նշանագիրս վրացերէն լեզուին, ըստ շնորհելոյ նմա ի Տեառնէ: Գրէր, կարգէր և օրինօք յարգարէր և անոյր ընդ իւր գոմանս լաւագոյն յաշակերտաց իւրոց, յարուցեալ իջանել ի կողմանս վրաց և երթեալ յանդիման լինէր թագաւորին, որում անուն էր Բակուր և եպիսկոպոսի աշխարհին՝ Մովսէս»:

Վրաց թագաւորը, եպիսկոպոսը և նրանց հետեւելով նաեւ զօրքը լսում են Մեսրոպի յորդորն ու խրատը թէ «պէտք է աստուածային օրինաց հնազանդիլ» իրենց նոր կրօնի, բրիստոնէութեան պահպանման համար, և յանձն են առնում «գլխիկին կատարել», այսինքն սեպհական գիր և այդ գրով բրիստոնէական գրքերն ունենալ: Այդ Կորիւն շարունակում է այսպէս՝ ըստ տպագրութեան. «Եւ դատել զայր մի թարգման վրացերէն լեզուին, որ անուանեալ կոչէր Ջաղայ, այր գրագէտ և ճշմարտահաւատ, հրաման տայր այնուհետեւ արքայն Վրաց ի կողմանց կողմանց ի խոնարհանջ գաւառաց իշխանութեան իւրոյ ժողովել մանկունս տալ ի ձեռս վարդապետին»:

Թէեւ այս պարբերութեան սկիզբը փոքր ինչ մտթ է, բայց ոչ մի տարակոյտ չկայ, որ Վրաց արքան վրացերէն լեզուի թարգման գտել է յատկապէս Մեսրոպի և ոչ թէ իրեն համար. ինչպէս կարելի է կարծել այդ պարբերութիւնից: Մեսրոպ կամ ըստ Կորիւնի՝ Մաշքոց անտարակոյտ պէտք ունէր թարգմանի, քանի որ նա ծննդեամբ Վրաստանից

⁵ Չարմանալի թող չերեւայ Կորիւնի այս խիստ բարձր գործածութիւնը: Կորիւն յունական ուսմամբ սնուած, այդ բարձր գործածել է այն մտքով ինչպէս որ հին հելլենները կոչել են անգիր (և անբաղաբակիրթ) ժողովուրդները: Նրանց հետեւելով հոմայեցիք էլ barbari են կոչել այդպիսիներին, այսինքն սեպհական կամ ազգային գիր չունեցողներին: Կորիւն շատ աւելի լեզու լեզու է գործածում հայկական հայրենիքին պատկանող Սիւնիքին, որի բնակիչներին նա կոչել է «գաղանձաբար», վայրենագոյն և ճիւղաբարբոյ...», նրանց հակաբրիստոնէական վարմունքի համար: Նայելով լեզու է գործածում նաեւ Արուսեանի համար. «Այնուհետեւ երանելոյն երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ վաղվազակի գաստուածային գրոց թարգմանութիւնն ի գործ արկանէր, որով յազան թօթափել վայրենամիտ և դատարկատուն և անասարարայ աշխարհն Արուսեանի՝ մարգարէագէտք և առաքելածանօթք լինէր...»:

նական դիւցազներգութիւնն ու վիպականութիւնը (romantisme) : Այս նոր գրական շարժման բնական հետեւանքն էր՝ լքել այն գիրքն, խոցուրին, որ ազդակն ու տարածողն է եղել կրօնական գրականութեան :

Այս տեսութիւնը սկզբունքով չընդունող վրացի եւ օտար գիտնականներ կան, որոնք տարբեր կերպով են բացատրում թէ այբուբէնի ծագումն եւ թէ գարեբրի ընթացքում առած կերպարանափոխութիւնն ու երկու ձեւի բաժանումը :

Վրաց գործունեայ թագաւոր Վախթանգ Զ-ի (ծն. 15 Սեպտ. 1675) հրահանգով յօրինուած Քարթլիս-Յիսոփէրան (Վրաստանի կեանք — կամ պատմութիւնը), ԺԼ. դարի այս ընդարձակ հաւաքագրութիւնը, առաջինն եղաւ, որ հայ պատմիչներին հակառակ, աւանդեց թէ վրացական գիրը ոչ թէ Ե. դարի (Յ. Ք.) նոր գիւտ է, այլ յօրինուել է Ն. Ք. Երրորդ դարում Վրաստանի առաջին անկախ արքայ Փանուազի շնորհիւ : Բայց մի ուրիշ կանխազոյն յօրինուած Վրաստանի Պատմութիւն, որի հայերէն թարգմանութիւնն ունինք ԺԳ. դարում կատարուած¹¹, լուռ է այդ մասին : Փանուազի մասին նա ասում է. «Թէ նա էր «այդ հմուտ եւ իմաստուն. սա հրաման ետ ամենայն երկրին խօսել զիգուսն վրաց» : Այս հրամանն, որ յայտնապէս յերիւրուած է մեր աւանդական Արամին վերագրուած նոյնպիսի կարգադրութեան վրայ, ազդել է ծառայել Փանուազին ընծայելու նաեւ վրացերէն գրի գիւտը, հայերէնից ութ դար կանուխ : Վրացի լուրջ ուսումնականներ եւս կարեւորութիւն չեն տալիս այս աւանդութեան : Պրոֆ. Խախանով այն կարծիքն է յայտնում թէ խոցուրին քրիստոնէութեան ժամանակի ծնունդ է եւ նպատակ է ունեցել վրացի ժողովուրդն ու նրա եկեղեցականութիւնը հեռացնել հին հեթանոսական գրից որ մինչեւ այն ժամանակ գործածութեան մէջ էր վրաստանում¹² : Այս տեսակէտը ճիշդ է թուում եւ մինչեւ խոցուրի երեւալը Վրաստանում գրի-հեթանոսական գրի-գործածութիւնը շատ հաւանական է : Ամբողջ ինդիքն այն է՝ թէ այդ «հեթանոսական գիրը» վրացական էր թէ օտար : Այս ինդիքը շուրջը, շատերն այնուհետեւ ուսումնասիրութիւններ

են կատարել : Ուսուցչապետ Օքրոմճեղելով այդ «հեթանոսական գիրը» համարում է պահաւանականից սերած վրացերէն այբուբէն, յատկապէս միջգրուելն, որը նա աւելի հեռուները տանելով կապում է Զրադաշտի Աւեստայի գրութեան հետ : Այս հիման վրայ, ուրիշ ուսումնականներ, պնդել են թէ այս վրացական «հեթանոսական գիրը» գրականութիւնից որ եւ է հետք չէ մնացել, որովհետեւ մի կողմից նորամուտ քրիստոնէական կրօնի չեւեռանդ հետեւողներն են ջնջել, միւս կողմից Վրաստանի վրայ արշաւող եւ երկիրն աւերածութեան ենթարկող օտար թշնամիները : Կան օտար վրացագէտ բանասէրներ, որոնք հայ պատմիչներէ աւանդածը Մաշթոցի ծանօթ ազդեցութեան նկատմամբ չարագանցուած են համարում, եւ այնպէս են համոզուած թէ նրա գործը սահմանափակուել է նրանով որ հին, նախաքրիստոնէական վրացական գիրը նոր ձեւի մէջ է մտցրել, այն նպատակով, որ հեթանոսական ժամանակի գրից տարբերուի : Եւ այսպէս երեւան է եկել խոցուրի-եկեղեցական այբուբէնը¹³ :

Առանձնապէս հետաքրքրական է այն գիտական մէճն, որ վերջերս տեղի ունեցաւ այս անթիւ երկու հեղինակաւոր մասնագէտների մէջ : Մի կողմից Թիֆլիսի (կամ նորագոյնը՝ Տփլիսի՝ վրացական ձեւով) համալսարանի ուսուցչապետ Իվ. Ջավախիշվիլի վրացի պատմաբանն, որ հայագէտ է եւ ունի հայ-վրացական նիւթի վրայ աշխատասիրութիւն¹⁴ միւս կողմից մեծ արեւելագէտ բանասէր բուլղարեան հայր Պ. Պետերս, որ լիովին հմուտ է թէ հայերէն եւ թէ վրացերէն գրականութեան :

Պ. Ջավախիշվիլի 1926ին հրատարակել էր վրացերէն լեզուով «Պատմութեան նպատակներն, ազդեւորներն եւ մէթոդները, անցեալում եւ ներկայումս» վերնագրով ընդարձակ ուսումնասիրութիւն, որի Ա. Գիւրբն յատկացուած էր Հնագրութեան (Paleographie) : Այստեղ Գ. եւ Ե. գլուխները նուիրուած էին վրացերէն այբուբէնին : Գիտնական հեղինակիս կարծիքով վրացերէն գիրը միակն է իր տեսակի մէջ, որովհետեւ չի ծագում ոչ յունարէնից, ոչ հայերէնից եւ ոչ

¹¹ J. Karst, Littérature géorgienne chrétienne, Strasbourg (?) 1934, pp. 11—13.
¹² Օրինակի համար սուսերէն լեզուով «Հին վրաստանի եւ Հայաստանի պետական կազմը», Պետերս-բուրգ 1905 :

¹¹ Ջուանչէրի անունով ծանօթ, սոց. վեհերի 1884ին :
¹² Очерки по Истории Грузинской Словесности. Вып. II, էջ 14 եւ շար. :

պահլաւերէնից, այլ կապ ունի անընդմիջապէս այն սկզբնական հին գրի հետ, որից սերել են փիւնիկեան այբուբէնն եւ արամականը (araméen), եւ որով գրուել են առաջին յունական արձանագրութիւնները : Այս տեսակէտը կարական ձեւով չէ շեշտուած այլ պատճառաբանուած է բուն ուսումնականի վրայ զգուշաւորութեամբ, որով մնում են անորոշ կէտեր, ինչպէս հարկն է չբացատրուած :

Հայր Պ. Պետերս իր պատասխանն սկսում է այսպէս. «Յոյս ունինք թէ մեր այս մեծ գիտնականի արդարացի արժանապատուութիւնը վերաւորած չենք լինի եթէ ուղղակի ասենք թէ նրա այս ծննդաբանութիւնը (généalogie) համոզեցուցիչ չէ» եւ մատնանշում է յօդուածի թղլ կողմերը : «Ջավախիշվիլի չի կարողանում ցոյց տալ թէ ի՞նչպէս են կապուած իրար հետ երկու գրութեան ձեւեր, մին ամենահինը, սկզբնականը եւ միւսը, նորը, Ե. դարում երեւան ելածը : Երկուսի մէջ հազար տարուան անջրպետ կայ : Ի՞նչ կերպարանափոխութիւն է տեղի ունեցել այս ենթադրեալ ամենահին ձեւի մէջ մինչեւ Ե. դարի խոցուրի վերածուելը : Բաւական չէ եւ ոչ էլ համոզեցուցիչ՝ ասել, թէ անագորոյն ժամանակը կործանել է եւ անհետ թողել նրանց երկուսի միջին ձեւը, նոյնպէս եւ կերպարանափոխութեան պարագաները : Գիտութեան ծանօթ չէ ոչ մի այդպիսի միջին ձեւ, ոչ մի այդպիսի կապ երկուսի մէջ»¹⁵ :

Նոյն Ջավախիշվիլի 1929ին նոյնպէս վրացերէն լեզուով հրատարակեց մի ուրիշ ուսումնասիրութիւն, որ ամբողջապէս նուիրուած էր հայկական գրականութեան եւ կրում է հետեւեալ խորագիրը. «Չվիլի սովխուրի սախստրիս մեծերից» = Հին հայկական պատմական գրականութիւնը : Այս անգամ նա իրաւացի կերպով մատնանշում է հին հայ մատենագրութեան բազմաթիւ թերի կողմերի վրայ, որոնք, պէտք է աւելացնենք, արդեւք են մեծ մասամբ արտագրողների կատարած խեղաթիւրումներին : Նա քննադատում է նախ այլեւայլ հայկական վկայաբանութիւններ, ինչպէս Սուքեանեանց, Ոսկեանց, Արիստակէսի եւ Գր. Լուսաւորչի միւս որդիների, թոռների եւ այլն կենսագրականները : Երկրորդ բաժնում նա երկարորէն խօսում է Ագաթանգեղոսի վրայ եւ յառաջ է բերում այն բոլոր քննադատութիւններն, որոնք արդէն եղած են այս մասին, սկսելով Ստիւարտից¹⁶ մինչեւ Ջամ (ինեան)¹⁷ : Չեն յիշուել Մարքուարտն ու Գեղեցիքը : Մեր այս տեսութեան համար կարեւոր են մանաւանդ ինչ որ Պ. Ջավախիշվիլի գրել է 150—195 էջերում Կորիւնի վրայ եւ քննադատում է առ հասարակ հայ գրականութեան ստեղծման պատմական ազդեւորները : Հայր Պ. Պետերս պատասխանում է յատկապէս «Մաշթոցի վարք»-ի կամ հայկական այբուբէնի ստեղծման վերաբերեալ քննադատութեան եւ գրում է. «Անկեղծօրէն բազմաթիւ հանդերձանկողմնակալ մնալ այս խնդրում, նա, Պ. Ջավախիշվիլի, անզգալիօրէն մղուել է՝ դատապարտելու այն պատմական ազդեւոր, որտեղ ասում է թէ վրացական այբուբէնը ստեղծուած է թէ վրացական այբուբէնը ստեղծուած է հայի ձեւով : Պ. Ջավախիշվիլու ծուած է հայի ձեւով : Պ. Ջավախիշվիլու այն խօսքին թէ «բոլորեւհան հայագէտն անշուշտ պիտի փոխէ իր համոզումն այս հարցում, եթէ նա մօտից քննէր Կորիւնի Մաշթոցի վարքն իր յարակից պարագաներով, ինչպէս ինքը, եւ որով Կորիւն մեծապէս կորցնում է իր յարգն իբրեւ պատմական ազդեւոր» : Պետերս պատասխանում է իր բերքը. «Եւ սակայն մենք այդ քննութիւնը կատարել ենք արդէն, մանրամասնօրէնը կատարել ենք արդէն, մանրամասնօրէնը կատարել ենք արդէն, մանրամասնօրէնը կատարել ենք արդէն Re-րէն, այն յօդուածում, որ գետեղել ենք Revue des Etudes Arméniennes հանդէսում (1929, հատ. IX, էջ 203—237) եւ մտազեր (1929, հատ. IX, էջ 203—237) եւ մտազեր չենք մեղադրելու ոչ մէկին թէ ինչու է չեւեռու կարգացել մեր այս գրածը» : Եւ նա շարունակում է. «Եթէ պարտաւոր լինէինք այսօր եւս, այսինքն Պ. Ջավախիշվիլի վերողբեալ քննադատութիւնը կարգաւրց յետոյ վերադառնալ նոյն խնդրին, պիտի ջանայինք աւելի որոշ կերպով շեշտել այն պարագայի վրայ թէ այն մուք տեղերը, ժամանակագրական բերութիւններն եւ անհետեւողականութիւնն, որ կարելի է գտնել Կորիւնի գրածների մէջ, ամենեւին չեն վնասում նրա պատմաբանի հիմնական ստուգութեանը : Կորիւնի այս թերի կողմերի մի մասը հետեւանք է այն խեղաթիւրումների, որ նրա «Մաշթոցի վարքը» կրել է գարեբրի ընթացքում, այլեւայլ արտա-

¹⁶ Ստիւարտի վրայ տես՝ իմ «Բելգիա եւ Հայերը» աշխատութիւնը, Վիեննա, Միլիթարեան Տպ., 1937, էջ 157—160 :
¹⁷ Պատմութիւն Հայոց գրականութեան, Նախըջեան 1917 :

¹⁵ Analecta Bollandiana, 1928, no. 36, p. 382.

զրոյների ձեռքով» իսկ միւս մասի շարժա-
 ութներն այն քաղաքական հանգամանքներն
 են որոնք ստիպել են պատմագրին՝ դիտաւո-
 րեալ կերպով քողարկել իրականութիւնն, որ-
 պէս զի իր դիտումներն ընդհանուրին մատ-
 չելի եւ հասկանալի չլինին»։ Եւ բազմաշատ
 հայագէտը անգամ մի եւս պարզում է իր դի-
 տողութիւններն այս խնդրի շուրջը։ «Հայ
 գրականութեան ստեղծումը անհրաժեշտ պա-
 հանջ էր դարձած թէ կրօնական եւ թէ ազ-
 գային պաշտպանութեան տեսակէտից, ընդ-
 դէմ սասանեան քաղաքականութեան, որ
 սպառնում էր իրանացեալ Հայաստանը։ Այս
 է պատճառն, որ այս ամբողջ ձեռնարկը մի
 տեսակ դաւադրութեան բնոյթ է կրել, որ եւ
 նկատելի է պատմութեան կիսաճանճուկ դար-
 ձուածքի մէջ։ Նոյն իսկ այն ժամանակ, երբ
 հարուածը հասել էր իր նպատակին, պարզա-
 պէս անխոհեմութիւն էր դաւադրութեան ա-
 պացոյցները պարսիկ իշխանութեան տրա-
 մադրութեան տակ դնել։ Կարելի էր մի թէ
 յայտնորէն ասել թէ ինչո՞ւ համար այն հայ-
 կական այբուբենը (Գանիէլեան նշանագրերը),
 որ ասորականի վրայ էր ձեւուած, զանց է
 առնուած գործածութիւնից։ Պէտք էր այս
 լքումը թագցնել թշնամուց, որովհետեւ այդ
 այբուբենն այն մեծ վտանգն էր ներկայաց-
 նում, որ նման էր պահլաւականին, որ իր
 կարգին սերած էր արամականից։ Կորիւն
 խոհեմութեամբ լուր է այս մասին, այնպիսի
 ճարտար պատրուակով, որ մասամբ ճիշդ է,
 մասամբ վարագուրուած։ Եթէ Կորիւն այս-
 պէս չվարուէր իր ապագայ քննադատների
 երկիւղից, նա գրանով միանգամ ընդ միշտ
 հարուածած պիտի լինէր հայկական գրակա-
 նութիւնը»¹⁸։

Բազմադրիւն արեւելագէտ հօր այս ճշ-
 դրիտ գատողութիւնների վրայ աւելացնենք
 մի ուրիշ մեծ բանասէր հայագէտի Դր. Մար-
 քուարտի նոյն խնդրի մասին հետեւեալ սրա-
 միտ նկատողութիւնները.

«Կորիւն կը բացատրէ թէ վրական ազ-
 փարեալը՝ Աստուծոյ շնորհուած հայերէն
 գրերու կազմաւորին վրայէն կարգուեցան։
 Իսկ թէ ինչ էր վրական գրերու հիմ կազմող
 սկզբնատարրը՝ այս մասին ընդհակառակն
 մեր հետաքրքրութիւնը չի գոյացնել Կորեան
 տեղեկութիւնը։ Ասկէ սցազափ միայն կրնանք
 եզրակացնել թէ նոյն սկզբնատարրը չէր կա-

ցուցաներ հայերէն ազփարեալը։ Որովհետեւ
 վրացերէնը՝ քանի մը դոյզն խոտորում ի բաց
 առնելով հայերէնի նման միեւնոյն կնկոտոս
 ձայնական դրութիւնն ունի, ուստի Մաշթոցի-
 ընելիքն ըլլալու էր պարզապէս հայ գրերը
 դործածել նաեւ վրացերէնի։ Եւ եթէ փոխա-
 նակ այսպէս վարուելու, վերջոյն համար
 յատուկ ազփարեալ մը կը հնարէ, այս իրո-
 դութիւնն ինքնին կը ցուցնէ թէ Մաշթոց
 իրապէս պէտք տեսած է, իւր գիւտն՝ արդէն
 գոյութիւն ունեցող ուղղութեան կամ կար-
 դաց յարմարցնել։ Եւ որովհետեւ վրացե-
 րէնի ձայնական դրութեան բարդութիւնը քայլ
 չի տար մտքէ իսկ անցնելու թէ Մաշթոցէ
 յետոյ մէկը փորձել ձեռնարկած ըլլայ, որ
 եւ իցէ գրով վրացերէն գրելու, պէտք ենք
 ըսել թէ Մաշթոցի հնարած վրացերէն գրե-
 րուն հիմ եղող ազփարեալը՝ նոյն ատեն
 Վրաստանի մէջ գործածուած այն գիրն եղած
 պիտի ըլլայ, որով օտար լեզուաւ յօրինուած
 պաշտօնական վաւերագրերը կը գրուէին։
 Ամէն պարագաները նկատելով, այս գիրը՝
 արամերէնէ առնուած պահլաւ գրին մէկ տե-
 սակը միայն կրնայ ըլլալ...։ Իրօք ալ այս-
 պիսի հիմ անկասկած կը մատնանչէ Վրաց
 հնագոյն եկեղեցական ազփարեալը, որուն
 մէջ տեսնելու ենք Մաշթոցի գիւտը, որչափ
 ալ նոյնին անմիջնորդական նախագաղափար
 օրինակը մեզ տակաւին անձանօք ըլլայ։
 Ինչպէս որ հայերէն գրերը ձեւած միջոցին
 ալ Մաշթոց ընդհանրապէս չչեղեցաւ Գանիէլ
 եպիսկոպոսի հնարած ազփարեալէ»¹⁹։

Խնդիրն աւելի եւս լուսաբանելու համար
 աւելորդ չէ մի մասնակի հայեացք արձակել
 այն գրական յարաբերութիւնների վրայ, որ
 տիրում էր Պարսկաստանի, Հայաստանի եւ
 Վրաստանի, այս երեք դարաւոր անմիջական
 զրացիների մէջ, այն ժամանակ։

Իրանում (Պարսկաստան) գրաւոր ազ-
 ցային պատմութիւն, ամենահին առասպելա-
 կան, գրուցախառն շրջաններից սկսելով, հե-
 ղինակուել է իր վերջնական ձեւի մէջ, եթե-
 րորդ դարում, Սասանեանների ժամանակ։
 Այս պատմութիւնը կոչուում էր Խոյայնամէ,
 որ երկու դար վերջը առիթ եւ ազդեւր է
 հանդիսացել Ֆիրդուսու Շահնամէին, որ մի
 բազմաբովանդակ ազգային գրուցադրու-
 թիւն է։ Խոյայնամէն իր հաւաքագրութիւն

¹⁹ Über das armenische Alphabet in Verbin-
 dung mit der Biographie des hl. Maštoč. Հանդ.
 Ամս., 1912, էջ 212։

¹⁸ Analecta Bollandiana, 1936, pp. 397—401.

սկսած փոխանցուել, տարածուել ու երգուել
 է միւս զրացի երկիրներում, որոնք արդէն
 Իրանի քաղաքական ազդեցութեան տակ էին
 գտնուում, ամէնից յառաջ՝

Հայաստանում, որտեղ նրանով հրապու-
 րուել է երիտասարդ Սահակ Բագրատունին
 եւ պատուիրել է Մովսէս Խորենացուն, որ
 այդպիսի մի պատմութիւն էլ նա գրէ՝ հայ
 ժողովրդի անցեալի վերաբերմամբ։ Եւ մեր
 պատմահայրը կատարել է այդ պատուէրը՝
 ոչ միայն այս պարսկական ազդերն իբրեւ
 հիմն ունենալով, այլ նաեւ «քաղգէացոց,
 ասորեստանաց եւ Պարսից գիւտները»
 պրպտելով, ինչպէս ինքն է գրում²⁰։ Այս
 պարագայում Խորենացին բարեխղճօրէն յայ-
 տարարել է թէ ի՞նչ է նրան անհաճոյ թուում
 պարսկական գրոյցներից։ Այս պատահել է
 եօթերորդ դարի վերջերը, յամենայն դէպս
 651ից յետոյ, ինչպէս փորձել եմ ապացուցա-
 նել իմ մի ուրիշ աշխատութեանս մէջ²¹։

Վրաստանում Խորենացու գրածի նման
 ազգային պատմութիւն, այսինքն վրացի ժո-
 ղովրդի անցեալին, ամենահին ժամանակից
 սկսած, նրա լեզուի ծագմանը պետական
 կազմին, ժողովրդական սովորութիւններին
 եւ այլն նուիրուած գրուել է ԺԱ. դարում
 Լեոնտի Մրովելիի ձեռքով։ Ոչ մի տարակոյս
 չկայ, որ այս պարսկական ու հայկական նա-
 խորդ պատմական ազդերները նրան անձա-
 նօթ չեն մնացել, որ շատ բնական է։

Իրանը՝ գրաւոր պատմութիւնից էլ յա-
 ուաջ, առասպելական երգեր, գրուցադրու-
 թիւններ եւ գրոյցներ է փոխանցել իր հա-
 րեւաններին, որոնք երբեմն նոյնութեամբ եր-
 բնին նոր միջավայրի պահանջած փոփոխու-
 թեամբ իւրացրել եւ սեպհականացրել են։
 Բայց մեզ համար, ներկայ ինդրում, այս չէ
 կարեւորն. այլ այն, որ Իրանը տուել է նաեւ
 իր գիրը։ Պատմութիւնից գիտենք, որ մինչեւ
 արաբական տիրապետութիւնը (է. դար),
 Իրան ունէր իր սեպհական պարսկական գիրն,
 որ էր պահլաւերէնը եւ միայն արաբական իշ-
 խանութեան եւ կրօնի ճնշման տակ արաբա-
 կան այբուբենը փոխարինել է պարսկակա-
 նին։ Նոյնպէս են վարուել միւս երկու զրացի
 երկիրները Հայաստանն եւ Վրաստանը, սա-
 էական տարբերութեամբ, որ փախանակ ոչ

²⁰ Վկայութիւնները բերուած են «Մովսիսի Խո-
 րենացու Պատմութիւն Հայոց, հանդերձ գաղղ. թարգ-
 մանութեամբ», Վենետիկի տպագրութիւնից, 1841։
²¹ «Ֆիրդուսի եւ Մ. Խորենացի», Վիեննա, Միւ-
 թարեան Տպ., 1936, էջ 28—44։

եւ է օտար այբուբենի, նոյն կրօնական գաժ-
 մունքի ազդեցութեան տակ իրենց յատուկ
 սեպհական գիրն են յօրինել եւ այնուհետեւ
 մինչեւ այսօր գրուցադրար կառչել են նրան
 եւ այդ գրով ազգային փառաւոր գրականու-
 թիւն ստեղծել։

Հայաստանում, Խորենացու Պատմու-
 թեան համաձայն, մինչեւ հայերէն գրի յօ-
 րինումը եղել է «գիր պարսից եւ յունաց...
 եւ անբաւ գրուցաց մատեանք»։ Այս գրքերի—
 ի հարկէ ոչ ամբողջովին այլ մեծ մասամբ՝
 պարսկական լինելը աւանդում է նոյն Խորե-
 նացին, երբ նրանց վկայութեան է դիմում
 ասե՛լով «պարսից մատեանք վկայեն... եւ
 Հայոց երգք վիպասանաց»։ Այս նշանակում
 է թէ Հայաստանում գրաւոր պարսկական է
 եղել, իսկ բանաւորը՝ երգի կամ գրոյցի
 ձեւով, հայկական։ Վերջին անգամ, այն է
 երբ հայ այբուբենի յօրինման պատրաստու-
 թիւն էր տեսնուում, նոյն Խորենացին գրում է
 թէ հայ արքունիքում «պարսկականաւ վա-
 րէին գրով»։

Վրաստանում եւս եղել են «գրուցաց մա-
 տեանք», որոնք յիշուած են Գ. Յ. ի մէջ,
 ինչպէս է օր. հ. «Նեմրոզի» գրոյցը, որ ա-
 ռասպելական է։ Ոչ մի տարակոյս չկայ, որ
 այնտեղ եւս պաշտօնագրերի համար ունե-
 ցել են գիր, մինչեւ խուցուրի յօրինումը,
 Ե. դարում։ Այդ գիրն անկասկած նոյնպէս
 պարսկական (պահլաւական) է եղած, ինչ-
 պէս էր Հայաստանում, հաւանականաբար
 իբրեւ պարսկապիս, նրանց վրայ գերելով
 հարեւանի կողմից։ Գծուար է ասել թէ ե՞րբ
 է սկսել պարսկական գրի կիրառութիւնը
 է մնացել նրանից։ Ես ուզում եմ եմքաղրել թէ
 փառնաւորին վերագրուած մեծ գերն, իբրեւ
 վրացերէն այբուբենի հիմարիչ, որ առասպել է
 — կարող էր իբրեւ հիմն ունենալ ուրիշ մի
 իրողութիւն. այն, որ գուցէ նա է եղած առա-
 ջին անգամ վրաստանում գրի գործածու-
 քիւնը մտցրողը եւ այս գիրը պարսկականն
 էր, բնականաբար։ Բնականաբար եմ ասում,
 որովհետեւ պարսկերէնը Փառնաւորի մայ-
 բնի լեզուն էր, նա պարսիկ էր մօր կողմից։
 Եւ ի հարկէ այս գրով պարսկերէն էին գրում
 պաշտօնագրերը։ Միւս կողմից շատ հաւա-
 նական է, որ վրացական նոր, ազգային
 այբուբենը պատրաստելու ժամանակ, Մես-
 րոպ՝ հայերէն այբուբենը հիմն ունենալով
 հանդերձ Ջաղելու միջոցով օգտագործել է

այն ժամանակ Վրաստանում պաշտօնական չըջանում կիրառուած այս պարսկական գիրը:

Այս կերպով Մեսրոպի խաղացած առաջնակարգ դերն անհերքելի է: Հայաստանից յետոյ, Վրաստան եւ ապա Ադրբեյջանը²² եւս կրթութեամբ պարտք ունին Մեսրոպի հանդէպ, որովհետեւ այս մեծ հայր՝ իր նախածնունդով ստեղծուած այբուբենները չնորհիւ մեծապէս ստատրել է այս կրկու երկիրները եւս ազգային վերածնութեան:

Ես հետաքրքրուեցայ թէ ի՞նչ են սովորեցնում այս խնդրի վերաբերեալ, եւրոպական մեծ հանրագրտարաններն, որոնց յօդուածագիրները հեղինակուոր մասնագէտներ են ընդունուած, իւրաքանչիւրն իր սուսնասիրած նիւթին: Իմ թերթած օրինակների մէջ ամէնից լուրջ վերաբերմունք գտայ իտալական մեծ Enciclopedia Italiana-ի մէջ (տպ. 1932), ուր յտաջ էն ընդունուած խոսքերը վերաբերում են մանրագիր, ապա միլիգրուի, նրանց հնչուումն եւ համարաստարան լատինական տառերը: Այբուբենի ծագման մասին ասուած է. «Խոսքերն մօտիկ կապակցութիւն ունի հայկական այբուբենի հետ եւ ըստ հայ պատմագրաց, յօրինուած է Մեսրոպի միջոցով: Միջգրուին՝ վրացի պատմագրերի խօսքով իրր թէ աւելի հին է քան խոսցուրին եւ յօրինուել է վրացի թագաւոր Փառնուպի մեղքով, բայց իսկապէս յայտնի է դարձել միայն Ժ. դարում, իրբեւ խոսցուրի արագագիր ձեւը, փոքր ինչ բարեկոխեալ: Յօդուածի հեղինակն օգտուել է, ինչպէս կրեւում է նրա յտաջ ըրած ցուցակից, թէ վրացական եւ թէ օտար այբուբենից:

Գրեթէ նոյն իմաստով են արտայայտուել, բայց շատ աւելի կարճ ձեւով, ուրիշ հանրագրտարաններ, ինչպէս գաղղիական Larousse du XX^e siècle եւ La Grande Encyclopédie, հոլլանդական Wincler-Prins Geill. Encyclopedie եւ Oostheek's Geill. Encyclopedie, Utrecht 1928: — Տարբերուած է գերմանական Der Große Brockhaus, Leipzig 1936, որ վրացական այբուբենը պահպանական գրից սերած է համարում. խոսցուրի նմանութիւնը հայերէնի հետ ընդունուած է, բայց Մեսրոպի նախածնունդութիւնն անտես է անում:

²² Կորիւն պատմում է, որ Մեսրոպ Վրաստանում իր գործը կատարելուց յետոյ վերադառնում է Հայաստան եւ գեղուցանում է իր գործը Մահալի Հայրապետին եւ Վասազապուհ արքային: «Աւուրս ինչ» հանգստանալուց վերջը, Մեսրոպ «Իջանէր յաշխարհն Արուսից եւ հասեալ ի թագաւորական տեղին տեսնելը գտար կախարհագրան Ադուանից, որում անուն երեմիա կոչէին եւ զնոցին թագաւոր, որում Արափոյէ էր անուն, ամենայն աղատօք Հանդերձ, որոյ առաւել հպատակութեամբ ընկալեալ վասն անուան Քրիստոսի: Ապա հարցեալ ի նոցանէ, առաջի եղեալ վասն որոյ կկոչին էր եւ նոցա կրկուցուցն զուզացելոց, կախարհագրան եւ թագաւորին, յանձն անել զպարթեանն հնազանդելոյ՝ տային եւս հրաման ի գաւառաց եւ ի տեղեաց իշխանութեան իւրեանց բազմութիւն մանկանց յարուեստ զպարթեանն անել եւ զուժարել ըստ արժանաւոր եւ պատեհ տեղեաց, դաս դաս զպրաց եւ ոտճիկս կարգել ի դարձանն...: Իսկ իրբեւ հրամանն այն արգեամբք եւ գործովք յանկ կանէր, ապա այնուհետեւ երանելոյն երեմիայի կախարհագրի ի ձեռն ստեղծ վազմագրի գաստուածային գրոց թարգմանութիւնն ի գործ արկանէր...»:

Անգլիական հանրածանօթ The Encyclopedia Britannica 14th edition, 1930, London, յտաջ է ըրել միայն այժմեան տիրող այբուբենը, բայց ոչ մի խօսք նրա յօրինման հեղինակի եւ թուականի մասին:

Ամերիկական մեծ հանրագրտարանը The Encyclopedia Americana, 1928, New York Վրաստանին շատ անհաւան տեղ է յատկացրել. այբուբենի մասին էլ ոչ մի խօսք: Ադրբեյջանն էլ բոլորը հին. ամենանորը 1888-ից է:

Մի անակնկալ գիւտ է արել անգլիական Chambers' Encyclopedia, London, new edit. 1927: Նա գրում է վրացական այբուբենի մասին թէ նմանուած է հայկականին, իսկ միջգրուի համար նա գրել է թէ «շատ սիրուն տեսք ունի, բազմաթիւ կլորած գրելովը, որով նա մասամբ նմանում է բուրմայական (burmese) այբուբենին»: Այս Բուրմա (Burmah) կրկիրն, ինչպէս տեղեկանում ենք այնտեղ, դասուած է Բրիտանական Հնդկաստանում եւ նրա Դարբարը «տիրէր»-չինական լեզուախոսներին է պատկանում: Իսկ լուրմայեր մոնգոլական ցեղից են:

Աւելի մեծ անակնկալ լուր կարդում ենք Սովետական մեծ հանրագրտարանում — Մոսկուա 1930 (Большая Советская Энциклопедия): Սա ընդարձակ էջեր է նուիրել Վրաստանի պատմութեան, մասնաւորապէս ներկայ համայնավարական Վրաստանի անտեսական եւ գրական ճիւղերին: Բայց նրա այբուբենին հայեր կրեք տող է յատկացրել, այն էլ կրկնելու համար Փառնուպին վերագրուած առաստիւր թէ նա է յօրինել 4—3րդ դարում վրացական գիրը: Աւելորդ է համարել յտաջ ըրել ոչ խոսցուրին եւ ոչ միջգրուին:

Այս մեծ անուշադրութեան պատճառը հասկանալի է դասուած, երբ մի քանի էջ վերջը «վրացական այբուբենի բարեփոխումը» վերնագրի տակ կարգում ենք, որ համայնավարական Վրաստանի Հանրապետութիւնը 1926 Օգոստոսին վճռել է զանց առնել վրացական այբուբենն իւր նրա տեղ գործածել լատինականը: Արդէն սովորջ Վրաստանում, ասուած է այնտեղ, բոլոր գրամեքենաները լատինական գրով են գրում իրենց վրացերէն թղթակցութիւնները: Համայնավարական սկզբունքին տրուած այս աուրբից յետոյ — այսինքն սկզբունքով՝ ազգային այբուբենի տեղ միջազգային (լատինական) գրի գործածման վճիռը — յօդուածագիրը, ոմն Կ—Վիլի, վրացի բուլճիլի, ստիպուած է լինում խոստովանել թէ այդ որոշումը մնացել է անգործադրելի՝ տպագրութեան մէջ, իրր թէ «հարկ եղած դրամական միջոցների պակասութեան պատճառով»?!: Պատճառարանութիւն տակի քան միամիտ է...: Յամենայն դէպս յոյս կայ թէ այդ «միջոցների բացակայութիւնը» (отсутствие средств) աւելի եւս զգալի կը դառնայ այսուհետեւ, եւ հայ-վրացական այդ մեծ գործը, վրացական այբուբենը՝ կը շարունակէ տիրել...:

ՍԱՐՈՒԵԱՆ



ԳՐՈՒՆԵՍԻՈՍ ԲԱՐՍԵՆԻՐԻ ԶԱՎԱԾՈՒԹԻՒՆԸ ԶԱՅՈՑ ԳԷՄ

(Շարունակութիւն):

ԳԼՈՒԵՐ:

Հայոց դէմ, որով երեւութաւորեալ կը հակին:

Գանք հիմայ միւսներուն: Հայերը կ'ըսեն. Քրիստոս քէեւ մեզի պէս կերաւ, բայց չեմք քսեր որ կերածը կը մարտէր, այլ այնպէս կը սպառէր գայն, ինչպէս կրակը ճիւղը կը սպառէ:

Վերը ցուցուցինք թէ մենք հարկադրուած կ'ուտենք եւ նաեւ հարկադրուած կ'արտաբանենք, բայց Քրիստոսի կամքն կախում ունէր՝ երբ կ'ուզէր կ'անօթենար, եւ երբ կ'ուզէր կ'ուտէր, ո՛չ մեղի պէս հարկադրաբար: Թէ ճշմարտացէս կերաւ եւ ոչ թէ կրակի նմանութեամբ, որ դո՛հերը կը սպառէ, կը վիպէ նախ Բարսեղ Մեծ. վասն Գոհութեան ձառին մէջ այսպէս կը գրէ նա. «Արդ մեր Տէրը՝ ճշմարտացէս կերածները մարտելով՝ քաղց կրեց, եւ դարձեալ երբ մարմնոյ խոնաւութիւնը բարձաւ՝ ծարաւ զգաց, ու յողմութիւն՝ երբ ճամբու նեղութեան յօղերն ու միւսները թոյլցան: Աստուածութիւնը յոյնութիւն չէր զգար, երբ մարմինը՝ բնութեան կարգի ազդեցութիւնները կը կրէր՝ սյրպէս արցունք ունեցաւ, երբ թոյլ տուաւ որ մարմնոյն բնական կարիքները դան»¹:

Գրիգոր, Նիւսիայի Եպիսկոպոսը եւ Բարսեղին Եզրայրը, Խրատներու տասնուչորրորդ ձառին մէջ կ'ըսէ. «Քրիստոս մեղանշական կարիքներու երբեք չմերձեցաւ. իսկ անմեղանշական կարիքներուն, որոնց յարմար չէ կարիք անունը տալ, փորձն առաւ իւր մարմնոյ ընդունարանին մէջ: Կարիք կայ, որ յատուկ իմաստով, եւ կայ որ փոխարեւրագէս կարիք կը կոչուի: Արդ այն որ կամքին վրայ կ'ազդէ եւ առաքինութեան մոլութեան կը տանի՝ ճշմարտացէս կարիք է. իսկ այն որ բնութեան մէջ է եւ անոր կարգին համաձայն կը շարժի եւ յայտնապէս կը տեսնուի թէ կ'ընթանայ, այդ ճշմարտացէս գործ կը կոչուի եւ ոչ կարիք: Այդպէս է ծնա-

¹ Patr. Gr., XXXI, 228—229. «Արդ որովս ընկալաւ զբաղցնութիւն տէրն, հաստատուն կերակուրն չնշեցեալ ի նմա եւ զծարաւելն իրաւացոյց խոնաւութեանն ծախեցելոց որ ի մարմնին, եւ վաստակեաց թեանն ծախեցելոց որ ի մարմնին, եւ վաստակեաց մարմնոյն որ ի բնութեանն յարմարացոյն էր զպատահումն ընկալաւ»: Ջեռագիր, 217, Միւրթ. Մատենադարան, Վիեննա:

նիւր, մեծնալը, սնունդով մարմնոյն պահպանումը եւ մարտուածին վտարումը, մարմնոյ տարրներուն համընթացութիւնը, բաղադրուածին լուծումը եւ բնութեան վերագործը: Արդ ի՞նչ կ'ըսէ (մեր կրօնի) խորհուրդը. ասոնցմէ ո՞ր մէկուն մերձեցաւ Աստուած. ա՞յն կարիքին, որ ճշմարտացէս ասուած. ա՞յն կարիքին, որ ճշմարտացէս կարիք կը կոչուի եւ մոլութիւն է, թէ երկրորդին որ բնութեան մոլութիւն մըն է: Եթէ մեր խօսքով պաշտպանէինք թէ անկարգ (կարիքներու) մէջ էր Աստուած՝ հարկ պիտի ըլլար փախչիլ մեր վարդապետութեան անհեթեթութեանէն, վասն զի աստուածային բնութեան մասին ոչ ուղղափառ բան մը (պիտի հաստատէինք): Եթէ ըսուի թէ մեր բնութիւնը զգեցաւ, որուն սկիզբը, հաստատութիւնը եւ սկզբնաւորութիւնն իրմէ է, ի՞նչով պիտի տարբերէր մեր վարդապետութիւնը այն աստուածավայել գաղափարէն, թիւնը այն աստուածավայել վարդապետութեան ոչ մէկ որուն համաձայն չարչարելութեան ոչ մէկ խորհուրդ կը մտնէ Աստուծոյ մասին մեր հաւատոյ հանդանակին մէջ: Բժիշկը հիւանդ չենք համարիր, երբ հիւանդ մը կը բուժէ. նաեւ երբ մերձեցայ հիւանդին՝ ասոնց ցաւի (վարակուելու) կը մնայ բժշկուողը»²:

Քննեցէք վարդապետին խօսքերը, դուք որ անգրիտակցօրէն երեւութականութեան կը հակիք. եւ տեսէք ինչպէս կ'ըսէ թէ յանձն առաւ ծնանիլ, մեծցաւ՝ այսինքն մեծցաւ մարմնով, կերաւ ու արտաքսեց մարտածը, այնու որ կ'ըսէ թէ մարտածը վտարեց: Կ'ուսուցանէ թէ ճշմարտ կարիքը մեղքն է. ասոնց չմերձեցաւ Քրիստոս: Իսկ ծնանիլը, ստեղծելը եւ մարտածին վտարումը՝ գործ կ'ուտեն վարդապետը, եւ ո՛չ կարիք. եւ կ'ըսէ թէ Քրիստոս գաստնք առաւ ու կատարեց, թէ Քրիստոս գաստնք առաւ ու կատարեց, սակայն ոչ որպէս զի ցուցնէ թէ մարդացաւ, սակայն ոչ արկադրուած ու ահամոյ. մեղի համար կատարեց գաստնք, բայց ոչ միշտ ու անզաղար, հապա երբ ուզեց ու բազմաց:

Սակայն երեւութականները կը խրոչին ըսելէ թէ էմմանուէլի մարմինը կուտան արիւնէ ձեւուցաւ: Անոնց դէմ կ'ըսէ իմաստունը, որ կը գրէ. «Մօրս արգանդին մէջ մարմին ձեւուցայ, երբ տասնուչորս ամիս արեան մէջ կերպարան առի»: Այստեղ մեզի սպառնոյց կը տրուի որ բոլոր մարդիկներու մարմինը մօր արիւնէն կը կազմուի: Հայերը

² Patr. Gr., XLV, 50.